

## Լիանա Մամյան

### «ԼՈՐՔԻՆԳ»-Ի ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր- լոբբինգ, Սփյուռք, ԱՄՆ, Հայոց ցեղասպանություն, Լեռնային Ղարաբաղ, Հայ դատի ամերիկյան հանձնախումբ, Ամերիկայի հայկական համագումար, բանաձև:

«Լոբբինգ» եզրը առաջացել է անգլերեն *lobbyism* (կուլուարներ, միջանցք) բառից:

Լոբբինգը քաղաքական համակարգի ինքնատիպ ինստիտուտներից է, որը տարբեր կազմակերպություններին, կուսակցություններին, արհմիություններին հնարավորություն է ընձեռում ազդեցություն ունենալ տվյալ պետության կառավարության և օրենսդիր մարմնի որոշումների ընդունման վրա՝ ի շահ նույն այդ կազմակերպությունների: Ընդունված է համարել, որ լոբբինգի հայրենիքը Ամերիկայի Միացյալ Նահանգներն են, որտեղ XIX դարում ձևավորվել է քաղաքական ազդեցության այդ միջոցը:

Մասնագետների մի մասի կարծիքով «լոբբինգ» եզրն առաջին անգամ կիրառվել է դեռևս XIX դարի 20-ական թթ., երբ սենատորները խորհրդակցության ընդմիջման ժամանակ հավաքվում էին Ներկայացուցիչների պալատի լոբբիում՝ սպասասրահում, և քննարկում այս կամ այն հիմնահարցը կամ որոշումը<sup>1</sup>: «Լոբբինգ»-ը մեծ մասամբ ցույց է տալիս մի գործընթաց, որը նպատակ ունի ազդել որևէ երկրի կառավարության և նրա կառույցների վրա:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում լոբբիստական գործունեությունը սոցիալ-քաղաքական զարգացած ինստիտուտ է, որն իր ազդեցության խմբերի ու շահեր ունեցող խմբերի հետ ունի պետություն-լոբբիստական խումբ յուրահատուկ հարաբերություններ: Լոբբիստներն այսպիսով տարբեր «գործարքներում» միջնորդի դեր են կատարում շահեր ունեցող խմբերի ու քաղաքական գործիչների, իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների ներկայացուցիչների միջև՝ զգալի ազդեցություն ունենալով երկրի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Այս տեսանկյունից լոբբինգը կարևոր տեղ է զբաղեցնում երկրի ժողովրդավարության մեխանիզմում և հանդիսանում ժողովրդավար լինելու կարևորագույն ցուցիչներից մեկը:

Նշենք, որ լոբբիստական գործունեությամբ կարող են զբաղվել ինչպես անհատ գործիչները, այնպես էլ քաղաքական, տնտեսական ու սոցիալական խմբերը,

<sup>1</sup>Տե՛ս Майкл Бернстам, Музыка в США заказывают лоббисты, 30 октября, 2008, [http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid\\_7695000/7695523.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm).

կազմակերպություններն ու շարժումները, հասարակական-քաղաքական, պետական ինստիտուտները: Նշված սուբյեկտները միմյանցից տարբերվում են իրենց նպատակներով, դրանց հասնելու միջոցներով, կիրառվող տեխնոլոգիաներով: Նման խմբերն ընդունված է անվանել լոբբիստական, այլ կերպ՝ ազդեցության խմբեր, կամ շահեր ունեցող խմբեր: Ըստ ամերիկյան արտգործնախարարության տվյալների, ԱՄՆ-ում լոբբիստական հզոր կառույցների թվին են պատկանում հրեականը, հայկականը, չինականը, հունականը, հնդկականը, և ուկրաինականը<sup>1</sup>:

ԱՄՆ-ում էթնիկական սկզբունքի **հիման վրա հենված** լոբբինգները ձևավորվել են դեռևս XX դարի սկզբին: Ներկայումս էթնիկ խմբերն ամեն տարի միլիոնավոր դոլարներ են ծախսում՝ ազդելու ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա և խոչընդոտելու հակառակորդ էթնիկ խմբի լոբբինգի ազդեցությունը<sup>2</sup>:

Հայկականը էթնիկ տեսակի լոբբինգ է: Դեռևս անցյալ դարի 60-70-ականներից սկսած՝ հայկական քարոզչության խմբերն իրենց բուռն նախաձեռնություններով կարողացել են բազմաթիվ հաջողությունների հասնել: Այսօր հայկական լոբբինգը երրորդ ազդեցիկ էթնոլոբբիստական շարժումն է համարվում ԱՄՆ-ում՝ հրեականից ու հունականից հետո: Հայկական լոբբինգը հիմնականում իրականացվում է ամերիկահայ մեծաթիվ համայնքի շնորհիվ, որը ունի կազմակերպված կառույցներ:

Նշենք, որ հայերը ԱՄՆ-ում հայտնվել են դեռևս XVII դարի առաջին կեսին, սակայն համայնքը ձևավորվել է XIX դարի 70-ական թվականների վերջին: Նրանք զանգվածաբար ԱՄՆ են գաղթել 1890-ական թվականներին սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.) ԱՄՆ-ում բնակվում էր 60.000 հայ, 1915 թվականի Մեծ Եղեռնից հետո (1920-1924 թթ.) ԱՄՆ է գաղթել շուրջ 21.000 հայ: Ներգաղթի նոր ալիք է եղել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ապա՝ 1950-ական թթ., որը ընդմիջումներով շարունակվում է նաև այսօր: 1994 թ. տվյալներով ԱՄՆ-ում հայերի թիվը հասել է 1 միլիոնի, 2003 թ.՝ 1.200.000, 2006 թվականին՝ 1.270.000<sup>3</sup>: Աշխարհի ամենահայաշատ երկրների թվում ԱՄՆ-ն զբաղեցնում է 3-րդ տեղը՝ զիջելով միայն Հայաստանի Հանրապետությանը և Ռուսաստանի Դաշնությանը:

Միացյալ Նահանգների հայության համայնքային կյանքի կազմակերպման ու համակարգման առաջին լուրջ քայլերն իրականացվել են XIX դարի վերջերին, երբ ԱՄՆ արտագաղթած հայությունը սկսել է կազմակերպել որպես համայնք: Այսօր Նահանգներում ապրող հայությունը ներկայացնում է կազմակերպված ու ձևավորված ամբողջություն, որը՝ որպես էթնիկ խումբ, ազդեցություն ունի ԱՄՆ-ի ներքին ու

<sup>1</sup> St' u The influence of ethnic lobbying on US foreign policy, «Turkish Weekly» journal, 08.06.2012, p. 1.

<sup>2</sup> St' u Ambrosio Thomas, Ethnic identity groups and U.S. foreign policy, Washington, 2002, p. 207.

<sup>3</sup> «Հայ համայնքն ԱՄՆ-ում», Երևան, 2010, էջ 7:

արտաքին քաղաքական կյանքում: Հայ համայնքի համար շատ կարևոր են Հայոց ցեղասպանության, Լեռնային Ղարաբաղի, հայ-ամերիկյան հարաբերությունների, ՀՀ միջազգային դերի և այլ հիմնախնդիրները, որոնց օժանդակելու համար ստեղծվել են լրբֆստական մի շարք կառույցներ:

Միացյալ Նահանգներում հայկական լրբֆին ձևավորվել է արտագաղթած հայության ինքնակազմակերպման գործընթացին զուգահեռ, սակայն, որպես կազմակերպված համայնքային համակարգ, գործում է XX դարի 70-ական թվականներից, երբ ԱՄՆ իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում հայության խնդիրների բարձրացմանը զուգընթաց սկսում է կարևորվել հայության շահերը պաշտպանող լրբֆստական խմբերի և կազմակերպությունների ստեղծման հարցը:

Միացյալ Նահանգներում գործող հայկական լրբֆստական խմբերն ու անհատ լրբֆստները հետևողականորեն աջակցում են երկրի օրենսդիր և գործադիր մարմիններում հայության շահերին առնչվող այնպիսի հարցերում, ինչպիսիք են Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ հարաբերությունների զարգացումը, ամրապնդումը և ֆինանսական աջակցության հատկացումը: Հայկական լրբֆինգն ակտիվ գործունեություն է ծավալում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակման վերացման, այդ համատեքստում ԱՄՆ-ի կառավարության կողմից Ադրբեջանին ցուցաբերվող տարեկան ֆինանսական աջակցության սահմանափակման, ՀՀ և Ադրբեջանի միջև ռազմական հավասարակշռությունը չխախտելու, Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի ուղղությամբ<sup>1</sup>:

Ազգային անվտանգության տեսաբան Ջեֆգն Բժեգինսկին իր «Արտաքին քաղաքականություն» հոդվածում ԱՄՆ-ի հայկական լրբֆին համարում է արդյունավետությամբ երրորդը, որը կարողանում է ազդել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վրա<sup>2</sup>: Նա գրում է, որ Հայկական սփյուռքը մեծ դեր է խաղացել Հայաստանի հանրապետության քաղաքական և հասարակական կյանքում: Բացի այդ, Սփյուռքը հանդիսանում է ՀՀ-ի քաղաքական ու ազգային խնդիրները ներկայացնող աշխարհում: Ավելին, հայկական լրբֆին զգալի հաջողությունների է հասել վերջին 20 տարիների ընթացքում (Հայոց ցեղասպանության ճանաչում ԱՄՆ 40 նահանգների կողմից, 5 նահանգների կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչում և 907-րդ բանաձև):

<sup>1</sup> «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 114:

<sup>2</sup> St' u The role of the Armenian lobby in the pattern of enmity in South Caucasus, Washington DC, 2013. p. 13.

ԱՄՆ-ի հայ համայնքը հիմնել է Երկու հզոր լոբբիստական կառույցներ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի հայկական համագումարը (Ասամբլեա): Երկու կազմակերպություններն էլ հավասարապես գործուն են և ուժեղ հատկապես հայաշատ այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Կալիֆորնիան, Միչիգանը և Մասաչուսեթսը: Ինչպես նշում է Ջոն Հոփկինսի անվան Կենտրոնական Ասիայի և Կովկասի հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Սվանթե Կոռնելը. «Հայկական լոբբին ԱՄՆ-ում ուժեղ է իր կազմակերպվածության և վճռականության շնորհիվ, որը միաժամանակ շատ ազդեցիկ է տեղական ընտրությունների ժամանակ»<sup>1</sup>:

Հայկական լոբբին ԱՄՆ-ում հասել է զգալի հաջողությունների՝ ստանալով ԱՄՆ Կոնգրեսի հայամետ անդամների քաղաքական և նյութական օժանդակությունը: Հայկական լոբբիի ջանքերի արդյունք է «Ազատության աջակցության ակտի» 907-րդ բանաձևը, տարեկան մինչև 90 միլիոն դոլարի նյութական օժանդակությունը Հայաստանին (ներկայումս 25 մլն), ԱՄՆ կառավարական շրջանակների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և այլն<sup>2</sup>:

ԱՄՆ-ի հայկական լոբբիի գլխավոր խնդիրներն են.

- 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության ճանաչումը,
- Քաղաքական գործընթացներում Հայկական Սփյուռքի մասնակցության ապահովում,
- ԱՄՆ-ՀՀ, ԱՄՆ-ԼՂՀ կապերի ամրապնդումը,
- Աջակցություն ՀՀ-ին և ԼՂՀ-ին,
- Հայկական սփյուռքի շահերին առնչվող խնդիրներում ազդեցությունը ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Պետք է նշել, որ հայկական լոբբիի գործողություններում առանցքային դեր ունի պայքարը Թուրքիայի և Ադրբեջանի դեմ: Երկու դեպքում էլ, հայկական լոբբին զգալի հաջողությունների է հասել ոչ միայն Վաշինգտոնում, այլ նաև եվրոպական տարբեր մայրաքաղաքներում:

Հայկական առաջին լոբբիստական կառույցը՝ ԱՄՆ-ի հայ ազգային կոմիտեն կամ Հայ դատի հանձնախումբը, ստեղծվել է 1918 թվականին՝ Վահան Քարդաշյանի կողմից, ով Օսմանյան կայսրության դեսպանն էր Վաշինգտոնում: Կազմակերպությունը, որի ստեղծման գործում կարևոր դերակատարություն են ունեցել ԱՄՆ-ի այնպիսի նշանավոր քաղաքական գործիչներ, ինչպիսիք էին Ջեյմս Հերարդը (ԱՄՆ-ի դեսպանը Պերմանիայում), սենատորներ Հենրի Լոջը, Չարլզ Հյուզը և ուրիշներ, մինչև 1941 թվականը կոչվել է Հայաստանի անկախության համար ամերիկյան կոմիտե: Նշենք, որ

<sup>1</sup> Տե՛ս BBC (2007, October 12). Armenian sway over US lawmakers, from BBC, <http://news.bbc.co.uk/2/hi/americas/7040344.stm>.

<sup>2</sup> Տե՛ս Heather S. Gregg, Divided they conquer: The success of Armenian ethnic lobbies in the US, Washington, 2012, p. 5.

Հայ դատի հանձնախումբ անունը առաջին անգամ Ղազնակցությունը օգտագործել է 1944 թվականին:

Հանձնախմբի գործունեության հիմնական նպատակներն ու առաջադրած խնդիրներն էին՝

1. Հասարակական տեղեկացվածության խթանում՝ ի շահ Ազատ, Միացյալ և Անկախ ՀՀ-ի աջակցության,
2. ԱՄՆ քաղաքականության ուղղորդում՝ կապված ԱՄՆ-ի հայության շահերի հետ,
3. ԱՄՆ-ի պետական քաղաքականության հարցերի վերաբերյալ ԱՄՆ-ի հայության ընդհանուր մոտեցումները ընտրողների ու պաշտոնյաների փոխհարաբերություններում ներկայացնելը<sup>1</sup>:

Այսօր Հայ դատի հանձնախումբը ակտիվ գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության անվտանգ, հեռանկարային և ժողովրդավարական երկրի կայացման և ուժեղացման, ԼՂՀ-ի ինքնորոշման իրավունքի աջակցման, անկախացման, ՀՀ-ին հատկացվող տնտեսական ու ժողովրդավարական զարգացման, ԱՄՆ-ի ֆինանսական աջակցության ծավալների ավելացման, ԼՂՀ-ին ֆինանսական աջակցության ուղղակի հատկացման ապահովման, հայերի դեմ 1915-1916 թթ. իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման և ՀՀ-ի նկատմամբ Թուրքիայի ու Ադրբեջանի քաղաքական ու տնտեսական շրջափակման վերացման, այլ հայանպաստ հարցերի ուղղությամբ:

Հանձնախումբը լոբբիստական գործունեություն է ծավալում ինչպես ԱՄՆ-ի կոնգրեսական շրջանակներում, այնպես էլ պետքարտուղարության և պետական այլ պաշտոնյաների շրջանում:

Այսպիսով, ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը հանդիսանում է հայ ժողովրդի ու նրա դատի արտահայտիչը ԱՄՆ-ում, նրա ազգային շահերի պաշտպանը՝ դրանք ներկայացնելով տեղական, շրջանային և դաշնային մակարդակներում:

ԱՄՆ-ում հայկական երկրորդ ազդեցիկ լոբբիստական կառույցը՝ Ամերիկայի հայկական համագումարը, կազմակերպվել է 1972 թվականին: Նա հետևողականորեն գործում է ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում: Ամերիկայի հայկական համագումարը, ակտիվացնելով հայանպաստ գործունեությունը Միացյալ Նահանգների, ինչպես գործադիր և օրենսդիր մարմիններում, այնպես էլ հասարակական-քաղաքական մակարդակներում, կազմակերպված լոբբիստական գործունեության շնորհիվ զգալի ներդրում ունի Վաշինգտոնի կողմից ՀՀ-ին ու ԼՂՀ-ին հատկացվող ֆինանսական աջակցության հարցերում<sup>2</sup>:

<sup>1</sup> «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 130:

<sup>2</sup> Նույնը, էջ 115:

Ամերիկայի հայկական համագումարի գործունեության նպատակն է «Ընդլայնել կազմակերպության առաջատար գիտակրթական և քարոզչական արշավները Հայոց ցեղասպանության հանընդհանուր ճանաչման համար և ապահովել ամբողջ Սփյուռքի համաձայնությունը, որպեսզի ՀՀ կառավարությունը հաղթահարի մարդկության հանդեպ իրականացված այս ոճրագործության հետևանքները, ինչպես նաև աջակցել ԱՄՆ-Հայաստան և ԱՄՆ-Ղարաբաղ հարաբերությունների խորացմանը՝ հիմնված ժողովրդավարության, օրենքի գերակայության, ազատական շուկաների, տարածաշրջանային անվտանգության և ազատ առևտրի ընդհանուր տեսլականի վրա»<sup>1</sup>:

Ամերիկայի հայկական համագումարը, Հայ դատի հանձնախմբի հետ միասին, իր լոբբիստական գործունեությամբ ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ԱՄՆ-ի Կոնգրեսի անդամներին հայության խնդիրների լուծման գործում ներգրավելու ուղղությամբ, որի արդյունքում ստեղծվել է Հայկական հարցին նվիրված կոնգրեսական հանձնախումբ, որը հայ-ամերիկյան կապերի ամրապնդման ու հայության շահերի պաշտպանության հարցերով համագործակցում է Ամերիկայի հայկական համագումարի հետ:

Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը ստեղծվել է 1995 թվականին՝ կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնի և Էդուարդ Փորթերի կողմից: Օրենսդիրներից բաղկացած երկուսակցական այդ խումբը, իրականացնում է ԱՄՆ-ՀՀ հարաբերությունների զարգացման և ամրապնդման, տեղի հայության շահերի պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման, ՀՀ շրջափակման վերացման, հայերի դեմ իրագործված ցեղասպանության՝ ԱՄՆ-ի կողմից պաշտոնապես ճանաչելու խնդիրներ:

Ներկայումս Հայկական հանձնախմբի համանախագահներն են Ֆրենկ Փալոնը և հանրապետական Մարկ Քիրքը, որոնք ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամներ են: 2010 թվականի փետրվարի 4-ի դրությամբ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի 150 անդամ աշխատում է Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախմբի օգտին:

Նշենք նաև, որ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով 1997 թվականին ԱԱՀ-ի շրջանակներում հիմնվում է Հայկական ազգային ինստիտուտ, որի գործունեությունը հիմնականում կենտրոնացած է հայերի դեմ իրագործված ցեղասպանության վերաբերյալ ճանաչողական, տեղեկատվական և կրթական հետազոտությունների, ցեղասպանության պատմական արխիվների ուսումնասիրության ու միջազգային ճանաչման գործընթացին աջակցելու հարցերի շուրջ:

<sup>1</sup> St'u Vision and Mission. Armenian Assembly of America, <http://www.aaainc.org/index.php?id=86>

Ամերիկայի հայկական համագումարի շրջանակներում ակտիվորեն գործունեություն էր իրականացնում նաև Հայ-ամերիկյան գործողությունների հանձնաժողովը, որը կազմակերպության՝ հասարակության շրջանում իրականացվող տեղեկատվական-քարոզչական գործունեության հիմնական ինստիտուտն էր:

Թեև ԱՄՆ-ում հայկական խոշոր կառույցները Հայ դատի հանձնախումբը և Ամերիկայի հայկական համագումարն են, սակայն գործում են այլ լոբբիստական խմբեր ևս, ինչպիսիք են Հայ-ամերիկյան քաղաքական գործողությունների հանձնաժողովը, ԱՄՆ-Հայաստան հասարակական հարցերով հանձնախումբը, Հայկական հարցերով կոնգրեսական հանձնախումբը և այլն:

Ինչպես նշեցինք, ԱՄՆ-ի հայկական լոբբինգի կարևոր խնդիրներից է Հայոց ցեղասպանության ճանաչումը: Այս առումով թերևս ուշագրավ է 1975 թվականին ԱՄՆ Կոնգրեսում ցեղասպանությունը ճանաչող Ներկայացուցիչների պալատի թիվ 148-րդ համատեղ բանաձևը: 1984 թվականի սեպտեմբերի 10-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ընդունվում է 247-րդ բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»<sup>1</sup>:

2000 թվականի հոկտեմբերի 4-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդունում է թիվ 596 բանաձևը, որով ճանաչվում է 1915–1923 թվականներին Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը: 2007 թվականի հոկտեմբերի 10-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 27 կողմ և 21 դեմ ձայնով ընդունում է բանաձևը, սակայն Ջորջ Բուշի վարչակազմը վետո է դնում այն ԱՄՆ-ի Սենատի օրակարգ ներառելու վրա:

2003 թվականին Ջորջ Ռադանովիչը և Ադամ Շիֆը ներկայացնում են 193-րդ բանաձևը, որն ամերիկյան կառավարության ուշադրությունը հրավիրում էր ՄԱԿ-ի՝ «Ցեղասպանությունների կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի վրա: Նշենք, որ այս բանաձևը հաստատում է Սպիտակ տունը նույն թվականի մայիսի 21-ին: Նմանատիպ բովանդակություն ուներ նաև 164-րդ բանաձևը, որը ներկայացվում է Սենատի քննարկմանը: Այս կապակցությամբ մեջբերենք Ռադանովիչի խոսքերը. «Որպես ամերիկացիներ, մենք պարտավոր ենք աշխարհին ծանուցել և ծանոթացնել Հայոց ցեղասպանությանը: Մենք պետք է համոզված լինենք, որ հայերի եղեռնը հիշվում է աշխարհի կողմից, որն էլ կկանխի ապագայում մարդկության դեմ նման ոճրագործությունների իրականացումը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001, էջ 7-8:

<sup>2</sup> Տե՛ս [http://ancnews.info/?page\\_id=837](http://ancnews.info/?page_id=837).

2007 թվականի հոկտեմբերի 11-ին ամերիկյան Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների կոմիտեում 27 կողմ և 21 դեմ հարաբերակցությամբ ընդունվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ թիվ 106-րդ բանաձևը, որտեղ նշվում էր, որ Հայոց ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ` պատճառ դառնալով մոտ 2.000.000 հայերի բռնի տեղահանմանը, որոնցից 1.500.000 այր, կին և երեխա սպանվեցին, իսկ 500.000 փրկված հայեր արտաքսվեցին իրենց տներից, որով ոչնչացվեց հայերի 2500 տարվա ներկայությունն իրենց պատմական հայրենիքում:

2009 թ. մարտի 19-ին ԱՄՆ-ի Կոնգրես հայերի Ցեղասպանությունը ճանաչող նոր` 252-րդ բանաձև է ներկայացվում: 1915 թվականին Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու վերաբերյալ բանաձևը ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունել է 2010 մարտի 4-ին:

2014 թ. ապրիլի 10-ին վերջին գրեթե 25 տարում առաջին անգամ ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը Հայոց ցեղասպանության մասին թիվ 410 բանաձևն է ընդունում` կոչ անելով Սենատին հասնել նրան, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն արտացոլի Սենատի դիրքորոշումը: Բանաձևում նշվում է նաև, որ Հայոց ցեղասպանությունը մինչև օրս մնում է անպատիժ: Կողմ է քվեարկել 12 սենատոր, դեմ` 5-ը:

Բանաձևում մասնավորապես ասվում է.«1. Անհրաժեշտ է հիշել ու նշել Հայոց ցեղասպանության տարելիցը 2014 թ. ապրիլի 24-ին: 2. Նախագահը պետք է պայքարի արդար, կառուցողական, կայուն ու ամուր հայ-թուրքական հարաբերությունների հաստատման համար, որոնք ներառում են Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ամբողջական ճանաչումը: 3. Նախագահը պետք է ապահովի, որ ԱՄՆ-ի ներկայիս արտաքին քաղաքականությունը հիմնված լինի մարդու իրավունքների պաշտպանության վրա:

Ավելի վաղ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ հեռախոսազրույցում Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն Անկարայի դժգոհությունն էր հայտնել 1915-ի իրադարձություններին վերաբերող օրինագիծը Սենատի քննարկմանը ներկայացնելու, Սենատի արտաքին գործերի կոմիտեում բանաձևն ընդունելու վերաբերյալ: Ըստ Դավութօղլուի, թուրքական կառավարությունը միջոցներ կձեռնարկի նախաձեռնությունների դեմ, որոնք «մտահոգում են» Թուրքիային: Նա հավելել է նաև, թե հուսով է, որ բանաձևը կարգելափակվի Սենատում ու Ներկայացուցիչների պալատում:



Ե՛վ Հայ դատի հանձնախմբի, և՛ Հայկական համագումարի համար շատ կարևոր է ԱՄՆ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը: Այս կապակցությամբ բերենք հանձնախմբի անդամներից մեկի խոսքերը. «Ցանկացած ուժ, որ կմերժի Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքը և կցանկանա Արցախը տեսնել Ադրբեջանի կազմում, չի կարող ազնիվ համարվել, քանզի դա կնշանակի պատմության անտեսում, աջակցություն ագրեսորներին և մարդկային իրավունքները չընդունողներին»<sup>1</sup>:

Շատ կարևոր է նաև հայկական լոբբիի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար միջազգային դոնորներ գտնելը: Այս առումով ևս հայկական լոբբին շատ հաջողակ է, որի գործողությունների շնորհիվ 1998-2011 թվականներին ԱՄՆ-ը Լեռնային Ղարաբաղին տրամադրել է ավելի քան 36 միլիոն դոլար օգնություն<sup>2</sup>:

ԱՄՆ-ում հայկական լոբբինգի հաջողություններից է հանդիսանում «Ազատության աջակցման ակտի» 907-րդ բանաձևը: 1992 թվականի հոկտեմբերի 24-ին ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշը ստորագրում է «Ազատության աջակցման ակտը» («Freedom for Russia Emerging Eurasian Democracies and Open Markets Support Act» or «Freedom Support Act»)<sup>3</sup>: Այդ ակտը ուղղված էր Խորհրդային Միության փլուզմամբ առաջացած նորանկախ հետխորհրդային հանրապետություններում ազատ շուկայական տնտեսություններին ու ժողովրդավարական բարեփոխումներին աջակցելու ամերիկյան ծրագրերի իրականացմանը: Ջորջ Բուշի բնորոշմամբ. «Այս պատմական օրենսդրությունը սահմանում է մի շարք ծրագրերի իրականացում՝ աջակցելու Ռուսաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններում ազատ շուկայական տնտեսություններին ու ժողովրդավարական բարեփոխումներին... Հպարտ եմ, որ Միացյալ Նահանգներն ունի այս պատմական հնարավորությունը՝ օգնելու աշխարհի այս չափազանց կարևոր հատվածում ժողովրդավարությանն ու ազատ շուկայական տնտեսություններին»<sup>4</sup>:

Ազատության աջակցման ակտի մշակման և ընդունման աշխատանքներին ակտիվ մասնակցել են նաև Միացյալ Նահանգների հայկական լոբբիստական խմբերն ու կազմակերպությունները՝ Հայաստանին վերաբերող հարցերում հայանպաստ մոտեցումներ ամրագրելով:

Հայ լոբբիստների ջանքերով փաստաթղթում առանձին նշվում է 907-րդ բանաձևը՝ պահանջելով սահմանափակել Ադրբեջանին ցուցաբերվող օգնությունը («Restriction on Assistance To Azerbaijan»), որը 1999 թվականին ընդունում է Սենատը: Բանաձևն արգելում էր ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրվող օգնությունը, քանի որ վերջինս

<sup>1</sup> St' u Pursuing the Armenian Cause, «The Armenian Weekly», May 2001, p. 5.

<sup>2</sup> St' u The role of the Armenian lobby..., p. 24.

<sup>3</sup> St' u Heather S. Gregg, ab. men. w., p. 26.

<sup>4</sup> «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 120:

շարունակում է իր դաժանություններն ու ռազմական շրջափակումը Հայաստանի դեմ: 907-րդ բանաձևում մասնավորապես նշվում էր. «Այս կամ այլ օրենքով Միացյալ Նահանգների աջակցությունը կարող է չապահովվել Ադրբեջանի կառավարությանը մինչև նախագահի կողմից որոշում ընդունելը, Կոնգրեսին զեկուցելը, որ Ադրբեջանի կառավարությունը ձեռնարկում է որոշակի քայլեր՝ դադարեցնելու Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կիրառվող բոլոր տեսակի շրջափակումները և ուժի կիրառման այլ ազդեցիկ ձևերը»: Այս բանաձևի համաձայն՝ Ադրբեջանը համարվում էր նախկին Խորհրդային Միության միակ երկիրը, որին իրավասություն չէր տրվում Ազատության աջակցման ակտով ստանալ Միացյալ Նահանգների կառավարության ֆինանսական աջակցությունը: Պետք է նաև նշել, որ 907-րդ բանաձևով անկախության առաջին տասնամյակում (1992-2002) Ադրբեջանը ֆինանսական օժանդակություն չի ստացել ամերիկյան կառավարությունից<sup>1</sup>: Բանաձևը, փաստորեն Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակման հաստատմանը հակազդելու քաղաքական միջոց էր:

2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո իրավիճակը ԱՄՆ-ում կտրուկ փոխվում է, ինչի հետևանքով 907-րդ բանաձևը փոփոխությունների է ենթարկվում՝ ելնելով հակաահաբեկչական պայքարում Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի համագործակցության նկատառումներից: 2001 թ. հոկտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը նամակ է գրում ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին, որտեղ ընդգծում էր, որ 907-րդ բանաձևի պահանջի թուլացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ԵԱՀԿ Մինսկի խմբում Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա:

Եվ ահա 2001 թ. հոկտեմբերի 24-ին Սենատում ընդունվում է բանաձևի կիրառման հետաձգման մասին որոշում, որտեղ նշվում էր. «Նախագահին թույլատրվում է Ադրբեջանին տրվող օգնության հարցում չկիրառել սահմանափակումներ, եթե տվյալ պահին ԱՄՆ-ի անվտանգությունը դա է պահանջում»<sup>2</sup>:

Սահմանափակելով օգնության տարբեր տեսակների տրամադրումը, ներառյալ ռազմական, ֆինանսական աջակցությունը, 907-րդ բանաձևը, սակայն, չի կանխում ավելի քան 200 մլն դոլարի հատկացումը Ադրբեջանի կառավարությանը: Այնուհանդերձ, ավելի քան 9 տարի, 907-րդ բանաձևը հանդիսացավ ԱՄՆ կառավարության կարևորագույն գործիքը Ադրբեջանի կողմից ՀՀ տնտեսական և քաղաքական շրջափակմանը հակազդելու հարցում<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս The role of the Armenian lobby..., p. 24.

<sup>2</sup> Տե՛ս Heather S. Gregg, ab. men. w., p. 26.

<sup>3</sup> «Հայ համայնքն ԱՄՆ-ում», էջ 124:

Ինչպես նշեցինք, և՛ Հայ դատի ամերիկյան հանձնախումբը, և՛ Համագումարը հսկայական ազդեցություն են ունեցել 907-րդ բանաձևի ստեղծման գործում և շարունակում են այդ բանաձևի պահպանման ու կենսագործման ուղղությամբ իրենց լրբֆիստական գործունեությունը:

2001 թվականի մարտի 28-ին Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Արամ Սարաֆյանը նշում էր. «Հայ դատի ամերիկյան հանձնախումբը աջակցում է օրենքին, որը սահմանափակում է ԱՄՆ-ի կողմից օգնության տրամադրումը Ադրբեջանին և ակտիվորեն ընդդիմանում է այն ջանքերին, որոնք կարող են սահմանափակել կամ վերացնել այս արգելքը: Այս օրենքի կասեցման ցանկացած փորձ, հատկապես բանակցությունների շրջանում, ադրբեջանական կառավարության կողմից կարող է համարվել նոր ագրեսիա սկսելու ազդանշան»<sup>1</sup>:

ԱԱՀ-ն 907-րդ բանաձևի կապակցությամբ նշում էր. «907-րդ բանաձևը սահմանում է հստակ սահմանափակումներ Ադրբեջանի կառավարության համար, քանի դեռ այն շարունակում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը... Չնայած 907-րդ բանաձևը վերացնելու անընդհատ ջանքերին, մեզ և Կոնգրեսի մեր դաշնակիցներին հաջողվեց 907-րդ բանաձևը պահել իր ընթացիկ ձևով»<sup>2</sup>:

Հայկական լրբֆինգի հաջողությունները, սակայն, չէին կարող անտեսվել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից. պատահական չէ, որ ԱՄՆ-ում սկսում են ակտիվանալ նաև թուրքական ու ադրբեջանական լրբֆիստական կառույցները, որոնց առաջնահերթ խնդիրներից է ոչ միայն թուրք-ամերիկյան և ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունների մերձեցումը, թուրքական ու ադրբեջանական հետաքրքրությունների ու շահերի պաշտպանությունը, այլև համատեղ պայքարը հայկական շահերի դեմ: Նշենք նաև, որ թուրքական և ադրբեջանական լրբֆիստական կառույցները ստանում են սեփական պետությունների հովանավորությունն ու ֆինանսական զգալի օժանդակությունը:

Բացի թուրքական խոշոր լրբֆիստական կառույցներից, 2008 թ. փետրվարի դրությամբ ԱՄՆ-ի 27 նահանգներում առկա էին մոտ 180 թուրքական հասարակական կազմակերպություններ<sup>3</sup>: Հատկապես աչքի են ընկնում թուրքական երկու միություն, որոնցում մեկտեղված են թուրքական տասնյակ հասարակական, մշակութային, գիտակրթական կազմակերպություններ: Այս երկու միությունները հանդիսանում են որոշակի «համադաշնություն»՝ միավորելով տասնյակ ցրված կառույցները: Թուրքական այդ երկու «հովանի» կառույցներն են՝ ATAA-ն (Assembly of Turkish-American Associations) և FTAA (Federation of Turkish American Associations):

<sup>1</sup> Տե՛ս ANCA testifies before Congressional Foreign Aid Committee, «*The Armenian Weekly*», April 2001, p. 2,

<sup>2</sup> Տե՛ս Heather S. Gregg, *ab. men. w.*, p. 27.

<sup>3</sup> Տե՛ս Նահապետյան Հ., Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Երևան, 2010, էջ 19:

Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներում գործող ադրբեջանական կառույցներին, ապա նշենք, որ այստեղ գործում է 16 համայնքային կազմակերպություն: Դրանցից թերևս աչքի է ընկնում 1957 թվականից Նյու Ջերսի նահանգում գործող «ԱՄՆ-ի ադրբեջանական համայնք» (ASA) լոբբիստական կազմակերպությունը, որի կենտրոնակայանը Նյու Յորքում է:

«Թեև ԱՄՆ ադրբեջանական լոբբին դեռ աճում և զարգանում է, մենք ջանքեր ենք գործադրում, որպեսզի նույնքան կարևոր լինենք, որքան հրեական կամ թուրքական լոբբիները: Որպես ամերիկաբնակ ադրբեջանցիներ մենք աշխատում ենք տարբեր հարթություններում կարևոր կապեր հաստատել ԱՄՆ իշխանությունների և դաշնային կառավարության ճյուղերի հետ: Ձգտում ենք կառուցել ուժեղ և ազդու լոբբի, որը համեմատելի և արդյունավետ կլինի, ինչպես ԱՄՆ մյուս էթնիկ միությունները», - նշում է Ազերին<sup>1</sup>: Պարզ է, որ մյուս էթնիկ միություններ ասելով վերջինս ի նկատի ունի առաջին հերթին հայկականը:

Ակնհայտ է, որ ԱՄՆ-ում հայկական համայնքի առկայության պայմաններում Բաքվի, ինչպես նաև Անկարայի համար զգալիորեն բարդանում է Հայկական սփյուռքին հակակշռելու խնդիրը: Այլ հարց է, որ նշված իրավիճակը, տիպական լինելով որոշ երկրների պարագայում, (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա և այլն) կարող է չգործել այլ պետությունների պարագայում, որտեղ Թուրքիան ու Ադրբեջանը գործելու հավելյալ հնարավորություն ունեն:

Չնայած այն հանգամանքին, որ հայկական համայնքը և լոբբին բավականին կազմակերպված ու ազդեցիկ են և կարողացել են հասնել զգալի հաջողությունների, ստանալ ամերիկյան բազմաթիվ պաշտոնյաների ու քաղաքական գործիչների աջակցությունը, սակայն ամերիկյան պետությունը երբեք չի մոռանում, որ Թուրքիան իր դաշնակիցն է (Թուրքիան նաև ՆԱՏՕ-ի անդամ է), որի հետ կապված է քաղաքական, տնտեսական ու ռազմավարական շահերով:

Հայության խնդիրը շարունակաում է մնալ աշխարհի պետություններին և միջազգային ասոցիացիաներին ցույց տալ, որ մեր դատը արդար է ու հիմնավոր, և ճանաչված է միջազգային դաշնագրերով: Մեր խնդիրն է առաջացնել միջազգային հանրային կարծիք՝ ի նպաստ Հայ դատի: Այդ նպատակով անհրաժեշտ է ավելի լայն ու ազդու քարոզչություն՝ օտար լեզուներով գրված գրքերով, հոդվածներով, թերթիկներով, հանրագրություններով և այլ միջոցներով, ստեղծել հայանպաստ հանրային կարծիք պետական շրջանակներում՝ դյուրացնելու մեր հարցի լուծումը:

---

<sup>1</sup> Նույնը, էջ 138:

**Лиана Мамян, Концепт «лоббинг» и его виды среди армян в Америке,-** Статья рассматривает концепт «лоббинг», его институт, историю и предназначение проблемы Армянского Национального Комитета Америки и Армянской Ассамблеи Америки, которые являются самыми крупными армянскими группами лоббистов в Америке. Армянский лоббинг достиг значительных успехов: 40 штатов приняли Геноцид, 5 штатов независимость НКР, 907-ый акт, помощь Республике Армения и НКР в виде финансовых и материальных средств. В статье также отмечается основанный как противовес армянскому лоббингу турецко-азербайджанский лоббинг.

**Liana Mamyan, The concept «lobbying» and its types among the Armenians in the USA -** The article analyses the concept of «lobbying», its institute, the history and problems of two Armenian great lobbying groups in the USA: The Armenian National Committee of America and the Armenian Assembly of America. The Armenian lobbying has reached sustainable success: 40 states have recognized the Genocide, 5 states the independence of the NKR, act 907, financial and material support to Armenia and the NKR. The article also mentions the Turkish-Azerbaijan lobbying groups, which have been formed as a counterbalance to the Armenian lobbying groups.

**Լիանա Մամյան -** ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, նույն ամբիոնի լաբորանտ: